Թէ այն որ դու թմրած ես՝ որ ռէյկան տաս մարդ չի գընէ:

Ժ Ե.

Արե՛կ որ տամ քեզ խըրատ, լօք առնում խըրատ ի քենէ.
Թող թէ սիրու տէր եղաք, ի՞նչ կ'ուզեն այս խալխս ի մենէ:
Յորտեղ որ կանգնած տեսնուն, մատնացուց կ'անեն թէ նա է.
Ագեստէ մարդ ենք սպանել, կ'ասեն թէ՝ Արե՛կ վըճարէ:

Ժ Զ.

Քունն է ընկել աչերուս, չըգիտեմ թէ ի՞նչ նըշան է.
Սրտիկս ի կուման ընկաւ թէ դա ինք ըզքեզ կու սիրէ.
Հանցեղ որ բաժնեն ըզգառն ի մօրէն, որ դառնայ վայէ,
Սրտիկս ի քո շատ սիրուդ ֆիրիա՛թ հա՛լ պա՛հթ կու կանչէ:

Ժ Է.

Սիրելիքն դուք կու լինիք, սիրելուն ղամ նա կու քաշէ.
Հազար վատ 'ւ աղէկ լըսէ, սիրելուն երես չիբերէ.
Վարդ մի անփուշ ե՞րբ եղել քան ըզփուշն որ վարդ կու բերէ.
Պլպուլն ալ վարդին սիրուն զայն փշին ղախրըն կու քաշէ:

Ժ Ը.

Այսօր ի յիս մի՛ խօսիլ, խոց ունիմ որ ինձ հերիք է.
Զարկած է չարխի նետով որ սըլա՛քըն կէս նուկի է.
Առին 'ւ ի հաքիմ տարան, նա ասաց թէ՝ Ապրիլու չէ,
Կտրել է սրտին երակն 'ւ աչերուն արուն կու կաթէ:

Ժ Թ.

Ելնես դու ի ձեր տանէն եւ աչօք այնես թէ սիրէ՛.
Իմ սէրըն մէն ի՞նչ անէ երբ քո սէրդ ի հետ չընկերէ.
Սէրն որ ի մէկէն լինի, քան զմահուն օրըն դիժար է.
Ապ' երբ երկուքէն լինի, քան զնուշն ու շաքարն անուշ է:

Ի.

Սըրտիկս է մալուշ եղեր՝ զիր ամէն մլքեր կու ծախէ.
Խօ՛շ եար, ա՛մ, յառաջ կացիր, կա՛մ գընէ կա՛մ մասլահաթ.
Ըզգինն ալ յաւլով կտրէ՛, որ ամէն ոչինչ չի գընէ.
Դարձիր թանկ 'ւ աժան արա՛, որ ամէնքլ անդեհ գայ գընէ: